ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Գործուղման արդյունքների մասին

1. Անուն, ազգանուն – Անդրեյ Ղուկասյան

2. Զբաղեցրած պաշտոնը - ՀՀ Լոռու մարզպետ

3.Գործուղման վայրը և ժամկետները – 2019 թվականի նոյեմբերի 10-ից 12-ը Իրանի Իսլամական Հանրապետություն՝ Թեհրան և Մազանդարան նահանգ

4.Հրավիրող կողմը – Իրանի Իսլամական Հանրապետությոան Մազանդարանի նահանգային իշխանություն

5.Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդիրների համար էր նախատեսված) -ՀՀ Լոռու մարզի եւ ԻԻՀ Մազանդարան նահանգի փոխըմբռնման հուշագրի ստորագրում գործարար կապերի ամրապնդման նպատակով

6. Քննարկված թեմաները - Քննարկվել են երկու հանրապետությունների վարչական միավորումների միջև համագործակցությանն առնչվող հարցերի լայն շրջանակ, գործարար համայնքների միջև համագործակցության հեռանկարները, առաջարկվել են փոխգործակցության նոր ուղիներ և մեխանիզմներ

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը - Այցի ընթացքում մարզպետ Ա.Ղուկասյանը մի շարք հանդիպումներ է ունեցել և կատարել այցելություններ

- Հանդիպում Մազանդարանի նահանգապետ Ահմադ Հոսսինզադեգանի հետ
- Փոխընմբռնման հուշագրի ստորագրում երկու վարչական միավորների միջև
- Հանդիպում առևտրի պալատի նախագահ Մ.Ա.Դարաբիի և տարբեր գործարարների հետ
- Այց ջերմոցային, ֆերմերային, գյուղատնտեսական նշանակության օբյեկտներ, տարբեր արտադրություններ, տեղում արտադրվող ապրանքի իրացման կետեր, արտադրամասեր և մասնակցություն իրանական տնայնագործական ապրանքների ցուցահանդես- վաճառքի բացման արարողությանը
- Հանդիպում ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիզոր դեսպան Ն.Գ. պարոն Արտաշես Թումանյանի հետ
- Հանդիպում Սարի քաղաքի հայ համայնքի հետ
- Նահանգապետ Ա.Հոսսինզադեգանի հետ հանդիպումից հետո քննարկվել են երկու մարզերի համագործակցությանն առնչվող հարցեր
- Իրանի առևտրի պալատում մարզպետը կառուցողական քննարկում է ունեցել գործարար համայնքի ներկայացուցիչների հետ, ներկայացրել է մարզի պոտենցիալը

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը – Նահանգապետի հետ հանդիպման ժամանակ կնքվել է փոխըմբռնման հուշագիր ԻԻՀ Մազանդարան նահանգի ր ՀՀ Լոռու մարզի միջև համագործակցության համար

Համագործակցությունը էլ ավելի ամրապնդելու, գործարար նոր կապեր հաստատելու նպատակով կատարվել է փոխադարձ այցի հրավեր :

Նախատեսվում է կազմակերպել գործարարների փոխայցեր և երկու վարչական միավորների տարածքում արտադրված ապրանքների համատեղ ցուցահանդես:

9. Ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները - Ակնկալվում է երկու մարզերի միջև համագործակցության ակտիվացում, գործնական քայլերի իրականացում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը – 13 նոյեմբերի, 2019թ.:

X _____

ՀՀ Լոռու մարզպետ՝ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ